

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ ԵՎ ՀՐԱՊԱՐԱ ՈՒՄՆԵՐ

Կ. Գուրգարյան

ՀԱՅՈՑ ԳՐԵՐԻ ԾԱԳՄԱՆ ՇՈՒՐՁԸ

Հայոց գրերի ստեղծման պատիվը, ամենայն իրավամբ, պատկանում է Մեսրոպ Մաշտոցին: Արդարև, նա հիմք դրեց մեր սեփական գրին ու դպրությանը:

Ակներև փաստ է, որ մենք չունենք հեթանոսական շրջանից հայերեն լեզվով որևէ գրավոր վավերագրություն, սակայն դժվար է պնդել, որ մեր ժողովուրդը նախքան V դարը չի օգտագործել որևէ գիր: Ընդհակառակը՝ շատ փաստեր կան, որ հաստատում են հեթանոսական Հայաստանի մեհյաններում գոյություն ունեցող գրերի հավանականությունը: Ազգաթանգեղոսի վկայությունները դրեր կղև են մեր մեհյաններում, սակայն, տարաբախտաբար, պատմիչը չի խոսում այդ գրերի էության մասին, չի հիշատակում՝ հայերեն են կղև, արդյոք, այդ գրերը, թե որևէ այլ լեզվի, միայն պատմում է, որ Արտաշատ քաղաքի մոտ կղև է հատուկ մեհյան, ուր սովորել են քուրմերը, կոչվել է «Իււան գրչի Որմիզդի», Քրիստոնեությունը տարածելիս՝ հեթանոսական մյուս հուշարձանների հետ քանդել են նաև այս մեհյանը: Այնուհետև Ազգաթանգեղոսը խոսում է արդեն գրերի գոյության մասին.

«Եւ մինչդեռ կայր նա կախեալ այնպես, խոսեցաւ զայս ամենայն եւ գրեցին ատենակալ դպիրքն նշանագրացն»:

Մովսես Սորենացին ևս հաստատում է մեսրոպյան գրերից առաջ կղած գրերի գոյությունը: Իր պատմության առաջին գրքի Գ գլխում, նա մեր նախնիքներին մեղադրում է, որ գրի չեն առել մեր ազգի պատմության կարևոր գրվագները, թեև մեղանում գործածված են կղև պարսկերեն և հունարեն գրերը:

Նախամեսրոպյան շրջանում հայերեն գրերի գոյության փաստը կարելի է գտնել և Ղազար Փարպեցու գրքում: Միանգամայն որոշակի կերպով Ղազար Փարպեցին ասում է, որ կղև են հայոց լեզվի նշանագրեր, որոնցով կարելի է մարդկանց հոգին շահել ինքնուրույն ձայնով (սեփական) և ոչ «մուրացածոյ բարբառով»:

Այնուհետև խոսելով, այսպես կոչված, Բանիկյան նշանագրերի մասին, վերջիններս անվանում է «վաղնշուցն գտեալ» գրեր, որ հոգ չէին տանում կիրառելու: Այդպես են կոչում Բանիկյան նշանագրերը նաև Գորյունն ու Սորենացին: Հետագա դարերի պատմիչները ևս հաստատում են հայոց նախամեսրոպյան գրերի փաստը՝ հենվելով Կորյունի, Սորենացու և Փարպեցու ասույթների վրա: Ուստի ավելորդ է խոսել այդ պատմիչների վկայությունների մասին, մանավանդ որ դա հետո է մեր նպատակից: Միայն հիշատակության արժանի է Վարդան Բարձրաբերդցու վկայությունը, որը ինքնուրույն

¹ «Ազգաթանգեղոյ պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1914, էջ 61:

² «Ղազարայ Փարպեցու պատմութիւն Հայոց», Թիֆլիս, գր. Ա, էջ 29:

է և համոզիչ: Նա հիշատակում է, որ Կիլիկիայում Լեոն թագավորի օրոք գտնվել են հայագիր գրամենք՝ հեթանոս թագավորների անուններով:

«Եւ զի լեալ է հայերեն գիր հնոցն՝ վկայեցաւ ի ժամանակս Լեոնի արքայի, զի գտաւ գրամ ի Կիլիկիա, հայերէն գրով գրոշմեալ զանուն կապաշտ թագաւորացն Հայկազանց»³:

Նախամեսրոպյան գրի գոյութիւնը հաստատում են և օտար ազդրուներն ու գիտնականները: Հայոց հին հեթանոսական գիրը ամենայն հավանականութեամբ ոչնչացվել է քրիստոնեութեան տարածման ժամանակ և մոռացվել է:

Բնական է, որ հեթանոսական գրի փոխարեն քրիստոնեութեան շրջանում պետք է օգտագործելին որևէ նոր գիր՝ նոր կրօնի վարդապետութիւնը քարոզելու համար: Այս նպատակին ծառայել են սկզբնական շրջանում հունական և ասորական գրերը, որոնցով տարածում էին «Աստվածաշունչն» ու այլ կրօնական գրքերը: Այնուհետև հայերն ստեղծեցին և իրենց սեփական գիրը, որ գոյութիւն ունի ցայսօր:

Մեր պատմիչները հայոց գրերի ստեղծումը բացատրում են հրաշապատում ձևով: Թե՛ Կորյունը և թե՛ մանավանդ Մովսէս Խորենացին հիշատակում են, թե իրր Մեսրոպն իրեն տվեց աղօթքի և տեսիլքի ձևով երևաց նրան աստվածային աջը, որ գրեց պատի վրա հայկական նշանագրերը: Սակայն նույն պատմիչները վկայում են, որ հայոց նշանագրերը բերվել են Միջագետքից, ասորի մի եպիսկոպոսի մոտից (Դանիել անունով) և տվել են Սահակին ու Մեսրոպին գործածելու: Այդ նշանագրերով սովորեցրել են հայ մանուկներին մի երկու տարի, որից հետո պարզել են, որ այդ գրերը լիովին չեն համապատասխանում հայերենի հնչյուններին: Այնուհետև նրանք մտածել են մեր լեզվին լիարժեք, հնչյուններին համապատասխանող նշանագրեր (տառեր) ստեղծել: Սույն Դանիելյան նշանագրերի մասին խոսում են Կորյունը, Խորենացին, Փարպեցին, Վարդան Բարձրաբերդցին և այլք: Ուրեմն՝ հաստատ փաստ է, որ Մեսրոպը, նախքան հայոց այբուրենի ստեղծելը, գործ է ածել Դանիելյան նշանագրերը: Միաժամանակ, վերոհիշյալ նշանագրերը հիմք են դարձել մեր նոր այբուրենին:

Ի՞նչ նշանագրեր էին Դանիելյան կոչված գրերը, իրավ հայկական էին սրանք, թե որևէ օտար լեզվի ծնունդ, օգտագործված են եղել նրանք հնում երբևէ (քանի որ Կորյունը կոչում է ռուրիզ դպրութիւններից թաղված ու հարութիւն առած գրեր), որքան է եղել այդ գրերի քանակն ու լինչ գոսսավորութիւն են ունեցել նրանք: Ահա հարցեր, որոնցով զբաղվել են տարիներ շարունակ հայ և այլազգի բանասերները:

Հայ պատմիչները միաբերան վկայում են, որ Վռամշապուհ թագավորի օրոք բերվել են Դանիելյան նշանագրերը, որոնք թերի են եղել, հետագայում լրացվել են և կատարելագործվել: Սակայն ոչ մի տեղեկութիւն չեն հաղորդում այն մասին, թե այդ նշանագրերը Դանիել ասորին է հնարել, կամ որտեղից է ձեռք բերել ասորի հոգևորականը:

Կորյունը որոշակի ոչինչ չի ասում այդ նշանագրերի էություն, ծագման, քանակի և գոսսավորութեան մասին: Սակայն պատմիչը վկայում է, որ այդ նշանագրերը ոչ միայն դրսից բերվել են, այլև օգտագործվել են ժամս եր-

³ «Պատմութիւն Վարդանայ վարդապետի», Վենետիկ, 1882, էջ 501:

կու՞մ: Միաժամանակ, Կորյունն հաղորդում է, որ Դանիելյան գրերը բավական չէին հայերեն լեզվի սիդոբանները—կապերը ամբողջությամբ արտահայտելու համար, մանավանդ որ նշանագրերն էլ իսկապես ուրիշ դպրութուններից ժառանգված և հարություն առած հանդիպեցին: Սա պարզ ու որոշակի ակնարկ է այն մասին, թե գրերը օտար ծագում են ունեցել: Ամենայն հավանականությամբ Դանիելյան նշանագրերը նման են եղել սեմական նշանագրերին թե՛ տառատեսակներով և թե՛ գրություններով— աշխց ձևի), ուստի Մեսրոպը մեկնել է Ասորիք և ոչ Հունաստան: Ըստ Կորյունի, Մեսրոպն իր նշանագրերը ստեղծել է եղեսիայում, սրից հետո եկել է Սամոսատ քաղաքը և Հուփանոս գրչի օգնությամբ հարգարել ու ձևավորել է վերջնական այբուբենը: Սա միանգամայն հավատարի փաստ է: Մինչդեռ, ըստ Մովսես Խորենացու, Մեսրոպը Սամոսատում է տեսնում «տեսիլքը» և այնտեղ է հորինում հայոց այբուբենը: Երկու պատմիչի մոտ էլ «աշի» պատմությունը կա, որ ակնարկ է գրերի «աստվածալին» շնորհ լինելու մասին: Կորյունը չի հիշատակում թե ինչ գրեր ավելի ճիշտ, որ գրերը տեսավ Մաշտոցը՝ սուրբ աշով գրված: Խորենացու մոտ ես այդ առիթով ոչինչ չկա: Միայն որոշ հրատարակություններում (որոշ ձևագրերի հետ բաղադասելով) նշվում է, որ երևում է Մեսրոպին «աջ ձեռքի թաթ» քարի վրա գրելիս Ա, Ե, Է, Ը, Ի, Ո և Ի (այսինքն՝ ձայնավոր տառերը):

Խորենացու պատմության շատ օրինակների մեջ վերոհիշյալ ձայնավորների թվարկումը չկա, և սա միանգամայն բնական է: Պատմահայրը նշում է, որ Մեսրոպն այդ տեսիլքից սթափվելով՝ ստեղծեց նոր նշանագրերը և ոչ ձայնավորները: Այդ յոթ տառն այբլացրել են, մեր կարծիքով, հետագա գրիչները, որոնք մտածել են, թե Մեսրոպը միայն յոթ ձայնավորներն է ստեղծել:

Վաղար Փարպեցին գրեթե նույն տեղեկություններն է տալիս Դանիելյան նշանագրերի մասին, ինչ որ տեսանք Կորյունի և Խորենացու մոտ: Սրանից էլ չենք կարող իմանալ՝ նշանագրերը Դանիելն է հորինել, թե ձեռք է բերել ուրիշներից: Միայն «բարեպաշտ» և «սքանչելի կախկոպոսն Դանիել» արտահայտությունները վկայում են, որ պատմիչը գնահատում է Դանիելի մատուցած ծառայությունը:

Վերոհիշյալ երեք պատմիչներից հետո Դանիելյան նշանագրերի մասին խոսել են նաև հետագու դարերի պատմագիրները, որոնք ոչ միայն հաստատաբար են առաջինների վկայությունները, այլև որոշակի խոսում են Դանիելյան նշանագրերի քանակի մասին: Դրանցից ուշագրությամբ արժանի է Վարդան Բարձրաբերդցու վկայությունը, ուր պարզորոշ ասվում է, թե Դանիելյան 22 տառերին Մեսրոպն այբլացրեց ևս 14 տառ և կաղմեց հայերեն այբուբենը.

«...Սուրբն Մեսրոպ յօրինէ դպրութիւն հայերէն. քսան և երկու դիր սո Դանիէլի Ասորւոյ գտեալ ի հին ժամանակաց, որ վասն ոչ պարզելոյն գրնդարձակութիւն լեզուիս, անհոգացեալ եղև յառաջնոցն, յոյն և ասորի և պարսիկ գրով շատացեալք. և ոչ Մեսրոպ կարէր նոքօք փոխել զաստուածաշունչ մատենանս ի հայ լարբառ: Վասն որոյ աղօթից տուեալ զանձն գործակցութեամբ սրբոյն Սահակայ, տա նմա Աստուած զինգրելին, չորեքտասան դիրս, աշով իւրով գրոշմեալ առաջի նորա...»¹⁴

¹⁴ «Պատմութիւն Վարդանայ վարդապետի», Վենետիկ, 1862, էջ 49:

Սերմն 22 գիր է եղել Դանիելյան այբուբենը: Սակայն Վարդանը ևս պարզ ու որոշակի չի հիշատակում, թե որ տառերն են հնարվել Մեսրոպի ձեռքով, կամ որոնք են Դանիելյան նշանագրերը: Թե ոտողից է վերցրել պատմիչն այս թիվը (22), անհայտ է, քանզի նախորդ պատմիչներից ոչ մեկն ակնարկ չունի նշանագրերի թվի վերաբերյալ: Մեզ թվում է, որ Վարդանն ի նկատի է ունեցել եբրայերենը, կամ այլ սեմական լեզու, որ, իրոք, 22 գիր ունի: Մեր երկարամյա ու բազմակողմանի քննությունն այս ուղղութիւնով, մանավանդ հայերեն և եբրայերեն գրերի բաղդատությունն ըստ ձևի և ըստ դասավորութեան, մեզ բերել է այն համոզման, որ Դանիելյան կոչված նշանագրերը ոչ այլ ինչ են եղել, եթե ոչ եբրայերեն գրերը, որոնք կարող էին հնում գործածվելիս լինել Հայաստանում (Տիգրան Ի-ի օրով և նույնիսկ ավելի վաղ):

Դանիելյան նշանագրերի քանակի վերաբերյալ մյուս վկայությունը, որ գտնում ենք Ատեփանոս Տարոնացու (Ասողիկի) մոտ, միանգամայն անհավանական է: Համաձայն Ասողիկի վկայութեան, Դանիելյան նշանագրերը 29-ն էին, որին Մեսրոպն ավելացրել է յոթ գիր.

«... Ի սորա (Թէոդոս փոքր) աւուրս էր սուրբ հայրապետն Հայոց Սահակ, յորոյ աւուրս գպրութիւն Հայոց լեզուիս Ի՞՞ գիր ի Դանիէլէ փիլիսոփայէ Ասորոյ կարգեցաւ, իսկ զեօթն գրոցն պակասութիւն Մեսրոպր Երանելի տարօնեցի խնդրուածովք, Աստուծոյ անուս՝»:

Հենց այս փաստն է, որ արտահայտություն է գտել Մովսես Սորենացու որոշ ձեռագրերում: Սա արդյունք է մեխանիկական հաշվումների՝ հիմնված այն սխալ կարծիքի վրա, թե Մեսրոպը հնարել է միայն ձայնավորները, և այդպիսով, իբր, կենդանություն տվել «անշունչ գանիելյան գրերին»: Այս սկզբունքով էլ հայոց 36 տառից մեքենայարար հանել են յոթ, և ստացվել է այդ չարաբաստիկ թիվը՝ 29, որ ոչ մի հին լեզվի այբուբենին չի համարնկնում:

Սակայն կարևոր է մեկ փաստ միայն. — Դանիելյան նշանագրերի պատմությունը լեզունդ չէ, հաստատում են մեր մատենագիրները, միայն ոչ մի պատմիչ ստույգ տեղեկություններ չի տալիս այդ նշանագրերի մասին: Սա է պատճառը, որ վերջին դարերի գիտնականներից ոմանք չեն հավատում Դանիելյան նշանագրերի գոյութեան ճշմարտութեանը, համարում են ասորիների կողմից հնարված լեզունդ:

Հերթել Դանիելյան նշանագրերի գոյությունը անհնար է, քանզի բազում հիշատակություններ կան մեր պատմիչների մոտ: Գիտնականներից շատերն էլ լուծվածք են անցել այս հարցի մոտով և հանգել այս եզրակացութեան. թե Մեսրոպ Մաշտոցը մեր այբուբենը ստեղծել է հունարենի հետևողականութեամբ և, համեմատելով հայոց գրերը հունականի հետ, ցույց են տվել, թե, իբր, Մեսրոպը հորինել է հունարենում չեղած տառերը միայն: Մեծ մասամբ այս կարծիքը հիմնավորում են հայերեն և հունարեն տառերի հաջորդականութեան նմանությունը: Սա շատ կասկածելի հիմք է, որովհետև իրենք՝ հույները, իրենց այբուբենը վերցրել են եբրայերենից և փյունիկերենից: Սեմական լեզուների այբուբենը ևս նույն դասավորությունն ունի: Այդ դասավորությունը որոշ լեզուներում որոշ չափով խախտվում է ըստ տառերի քանակի (եբրայերենն

⁵ «Ստ. Տարոնացուոյ Աստղական պատմ. տիեզերական», 1883, լ. 139:

ունի 22 տառ, հունարենը՝ 24, լատիներենը՝ 26, հայերենը՝ 36 և այլն): Տասերի անունները կս մեծ նմանություն չունեն հունարենի հետ, իսկ տասնածները շատ հեռավոր նմանություն ունեն (այն էլ մի քանիսը միայն): Ուրեմն՝ հայոց գրերի հունական ծագում ունենալու հանդամանքը քիչ է հավանական, չի հիմնավորվում համոզիչ փաստերով: Մնում է ենթադրել, որ Մեսրոպն իր այբուբենն ստեղծելիս օգտվել է Դանիելյան նշանագրերից, կամ իր ձեռքի տակ եղած որևէ հին գրերից (գուցե եղած և մոռացված հայերեն):

Գարագաշյանն իր «Կենական պատմություն հայոց» քառահատոր աշխատության մեջ քննության առնելով հայոց գրերի ստեղծման հարցը, գտնում է, որ հայերը մինչև Ե դարը ունեցել են նշանագրեր: Նա հենվում է Փարպեցու «Գոն նշանագիրք հայերէն լեզուոյս» արտահայտության վրա: Բացի դրանից, նա գրում է՝ «անհնար էր լեզվին, առանց դպրության, հասնել այն աստիճան զարգացման, յարում կգտնինք զնա ի հատակոտորս երգոց վիպասանաց» (հատ. Դ., էջ 59): Գարագաշյանը նշում է, որ Դանիելյան գիրը սեմական ծագում ունի, իսկ Մեսրոպյան գիրն ստեղծվել է հունարենի հետևողությամբ:

Այնուհետև, հեղինակը բերում է Մեսրոպյան այբուբենի և հունարենի համեմատական աղյուսակը և մանրամասն խոսում առանձին տառերի հնչական առանձնահատկությունների մասին (մի կողմ թողնելով տառերի բաղդատությունը ձևի տեսակետից): Ըստ Գարագաշյանի, հայոց ա, բ, գ, դ, ե, զ, է, թ, ի, կ, ղ, մ, ն, ո, պ, ս, տ, ը, ւ, փ, ք տառերը ճիշտ հունարենից են վերցված (թվով 21 տառ), իսկ մնացյալ 15 տառը Մեսրոպն ստեղծել է, ելնելով հայերենի հնչյունական տվյալներից: Հետաքրքրական է որ, Գարագաշյանն ակնարկում է, այնուամենայնիվ, հին այբուբենը: Սոսկով խ-ի մասին, նշում է, որ հունարենի մեջ չկա կոկորդային այդ տառը, ուստի և մուծված է հին այբուբենն: Կնշանակի, ըստ Գարագաշյանի, հունարենից բացի Մեսրոպի ձեռքի տակ եղել են նաև այլ այբուբեններ, որոնցից օգտվել է նա: Գարբիել Ալվազյանը ևս գտնում է, որ հայոց տառերի 21-ը հունարեն են, իսկ 15-ը՝ ստեղծված — դրանք են՝ ը, ժ, լ, խ, ծ, հ, ձ, ճ, յ, չ, ջ, բ, վ, ց, սակայն ձևական համեմատություն չի արել:

Դանիելյան գրերին հունական ծագում է վերագրում հայագետ Հյուբերշմանը: Սա ևս համեմատում է հայոց այբուբենը հունարենի հետ և նշում, որ գրեթե նույն դասավորությունն ունեն: Ինչ վերաբերում է տառերի նմանությունը, ապա Հյուբերշմանի կարծիքով հայոց ւ, փ և ք տառերը հունարենից են փոխառած: Հյուբերշմանը ժխտում է հայոց գրերի պարսկական ծագում ունենալու գրույթը: Գիտնականը հենվում էր Մովսես Սորենացու վկայության վրա, համաձայն որի մեր հնչյունները հարմարեցված են հունարենի հնչյուններին:

Հակառակ վերոհիշյալ կարծիքների, որոշ գիտնականներ (Ֆր. Մյուլլեր, Ն. Մառ և այլն) հայոց գիրը համարում են սեմական ծագում ունեցող գիր, թեև չեն ժխտում հունարենի որոշ ազդեցությունը (հատկապես գրության ուղղությունը - ձախից աջ և տառերի դասավորության կարգը):

Ակազ. Աճառյանը մի շարք փաստերով հիմնավորում է, որ հայոց գիրը մեծ չափով առաջացել է հունական գրից (գրության ուղղությունը, անշատ գրվելը, ձայնավորների անկախությունը և այլն): Հայկական գրերի անունները, ըստ Աճառյանի, փոխառնված են հունականից և սեմականից, ուրեմն

Բանասերների մեծ մասը պնդում է, որ Մեսրոպը հունարենից վերցրել է 21—22 տառ, մնացածներն ինքն է հնարել: Բաղդասերով հունական գրերը մեր երկաթագրերի հետ, տեսնում ենք, որ հազվագյուտ տառեր միայն հեռավոր նմանություն ունեն, իսկ մեծամասնությունը խիստ տարբերվում է թե՛ ձևով և թե՛ հնչմամբ: Ահա պատկերը.

հունարեն	հայերեն	հունարեն	հայերեն
A	Ա	N	Ն
B	Բ	Ξ	Շ
Γ	Գ	()	Ո
Δ	Դ	Π	Պ
E	Ե	Ρ	Ր (Ր)
Z	Զ	Σ	Ս
Η	Է	Τ	Տ (Տ)
Θ	Թ	Υ	Ի
Ι	Ի	Φ	Փ
K	Կ	X	Ք (Ք)
Λ	Լ (Լ)	Ψ	(փս, պս)
M	Մ	Ω	(ոփ, աւ)

Բաղդասերությունից պարզ երևում է, որ Փ տառը հունական Փ (փի) տառից է, Ի տառը հեռավոր նմանություն ունի Β (բետա)-ին, Ի տառը՝ Ρ-ին, զույց Ո-ն Օ-ին, սակայն մնացած տառերը բոլորովին տարբեր պատկեր ունեն:

Բանասիրությունից մեզ ավելի շեշտվում է մեր այբուրենի գասափորությունից նմանությունը հունարենի այբուրենին: Դա որոշ չափով ճիշտ է: Բայց չէ՞ որ հունարենի ալֆաբետը սերված է փյունիկերենից, ուր տառերը նույն գասափորություն ունեն: Այդ կարգով են և երբայերեն կամ երբայեցիերեն գրերը: Վերջինս որ, նույն հետևությունը կարելի է անել նաև հայերեն գրերի գասափորությունը և, մանավանդ, տառերի անունները բաղդասերի հրեականի հետ: Այսպես՝ երբ, ալիֆը ավելի նման է այբին, քան հունական ալֆան, գիմելը՝ գիմին, քան գամման, գալետը՝ գա-ին, քան գելտա-ն, ցոֆիլը՝ ցո-ին (հունարենում չկա), մեմ-ը՝ մեն-ին քան՝ մի(մլու)-ն և այլն: Բացի անուններից հայոց տառածեղերը ևս խիստ նման են երբայերենին, որոշ տառեր ուղղակիորեն համընկնում են (Բ, Գ, Β, Ը և այլն):

Հայերենը երբայերենից խիստ տարբերվում է գրությունից (ձևից-աջ): Այստեղ, անշուշտ, Մեսրոպը հետևել է հունարենին:

Թե՛ հունարենը և թե՛ երբայերենը (կամ Դանիելյան կոչված այբուրենը) չէին բավարարում հայերենի հնչյուններին, զի առաջինն ընդամենը 21 գիր է, իսկ երկրորդը՝ 22 (այսինքն՝ հայոց հնչյունների քանակի մոտ երկու երրորդը): Պետք էր ստեղծել 36 նշանագիր: Դանիելյան նշանագրերն օգտագործելիս, մեր կարծիքով, Մեսրոպը հետզհետե հայտարարում էր հայերենի այն հնչյունները, որ գոյություն ունեին կենդանի լեզվում — հիմք ընդունելով հասկապես Տարսնի, Դողթան գավառի, Այրարատի ժողովրդի արտասանությունը, որ քաջ ծանոթ էր նրան: Անհամոզիչ է որոշ գիտնականների պնդումը, թե իբր Մեսրոպն ի նկատի է ունեցել բոլոր գավառների հայերի լեզվական ու բարբառային առանձնահատկությունները: Այդ բանն անհնար էր. նույնիսկ այսօր մեր շատ բարբառներում հնչյունների թիվը 40-ից անցնում

է: Եթե բոլոր բարբառների մեջ կգամ բոլոր հնչույթներն արտահայտեր առանձին գրով, որքան նշանադրեր էին պետք: Բացի գրանից, հայերն ունեցել են բավական կատարյալ լեզվով գրականություն, որից որոշ պատասխաններ հասել է մեզ վիպական բանահյուսության ձևով (Սուրենացու միջոցով): Այլապես, դարձանալի կլիներ, որ գրերի գլուխից հետո ստեղծվեր այնքան հարուստ կատարյալ լեզու, որով թարգմանված Աստվածաշունչը լավագույնն է համարվում այլ թարգմանությունների մեջ: Պետք է ենթադրել նաև, որ մեր արքունիքում կղել է, անգամ մշակվել է, բավական վաղից հայերեն: Չէ որ արքան և նախարարներն իրար հետ խոսել են հայերեն: Եթե մեր պատմիչները հիշատակում են, որ պետական գործերը վարում են պարսկական կամ հունական գրով, ապա ոչ մի տեղ հիշատակության չկա, որ հայ իշխանները կամ արքան միմյանց հետ խոսեն հունարեն կամ պարսկերեն: Ուստի Մեսրոպը, որ արքունական դպիր է կղել և քաջ ծանոթ կատարյալ հայերենին, կարիք չունի ընկնելու բոլոր գավառներն և աստիճանները բարբառները: Երբ Մեսրոպը պարզից հայերենի հնչյունները (գիտական հասկացողությունը՝ հնչույթները) նրան մտում էր տառեր ստեղծել ամեն մի հնչույթի համար: Ահա այստեղ է, որ Մաշտոցը հանգես է բերել լեզվաբանական արտակարգ հմտություն: Ամենից առաջ նա որոշել է խոսափել պայմանական դանդաղան նշաններից, որոնցով օգտվում էին շատ ժողովուրդներ (տառերի վրա գրվող դանդաղան կետեր, գծիկներ և այլն): Նա ընդունում է մի կայուն սկզբունք՝ ամեն հնչույթին առանձին նշանադրելու: Բայց, որովհետև իր ձևաքի տակ կգամ նշանադրեր պակաս էին, ինչպես վերևում ասացինք, ուրեմն պետք է ստեղծեր նոր նշանադրեր, որոնք չկալին թե 'Իանիելյան, (որ է երբայական, սեմական) և թե հունական ալֆաբետում: Այս պակաս տառերը նա ստեղծել է իր ձևաքի տակ եղած հիմնական աղբյուրից՝ 'Իանիելյան, կամ, որոշակի կերպով ասած, երբայական գրերից:

Հնչյունական տեսակետից երբայերենում պակասում են միայն հայերենի կրկնափոր ու եռակի բաղաձայնները (դ և ա կա, բայց ք չկա, ց կա, բայց ծ և ձ չկա, ը կա, բայց ո չկա և այլն): Թերևս դա է կղել պատճառը, որ հնարավոր է դարձել երկու տարի սովորեցնել այդ գրերով, մեկ նշանը գործ են ածել մի քանի հնչյունի համար: Այս վիճակից դուրս գալու բանալին ևս գտել է Մեսրոպը և մեկ տառածեղից ստեղծել է մյուսը՝ դանդաղան թեիկներ ու գծիկներ ավելացնելով: Այդ փաստն ապացուցելու համար քննության առնենք այժմ հայերեն առանձին տառերի ծագումը:

Հայոց Ա տառը հիմնական գծերով նման է երբայական ալիֆին* (երկաթագրերում պարզ զգացվում է աջ և ձախ մասերի նմանությունը, միայն մ'եսրոպը մի փոքր հեռացրել է իրարից և ներքևից մի գծով կապել միմյանց), իսկ անունը նույնն է, միայն լ-ն դուրս է բնկել, իսկ վերջին բաղաձայնը՝ ֆ-ը (որ մոտ է վ-ին) փոխվել է ք-ի. այլը—ալիֆ (ալիֆ): Երբայերենում ևս սա այբուբենի առաջին տառն է, որ անմիջականորեն կամ վլունիկերենի միջոցով անցել է հունարենին 10-ից 8-րդ դարերում մեր թվականությունից առաջ:

Ի տառը նույն բնիքը կամ բնյւ-ն է, միայն երեսը շուտ ավամ գեպի աջ: Սրանից հետո իր իսկ ստեղծած տառից հորինում է ևս նոր տառեր՝ և, որ ր-ն է, շուտ ավամ գլխի վրա, և ը, որ նույն ր-ն է, միայն ներ-

* Բոլոր տառատեսակները և տառերի անունները համեմատել հոգվածի վերջում գրված աղյուսակի երբայերեն գրերի հետ:

քեր թեկին իջեցնելով մինչև ուղղահայաց գծի տակ⁶։ Հարևան է հայոց 'ր տառը երբայցոց զալեալն Մաշտոցը վերացրել է ներքևի մասի կտր օղակաձևը, իսկ աջ կողմից թողել է փոքրիկ կախ բնկած մասնիկը իբրև 'ր տառի թեև Այս գիրը շուտ չի ավելի։ Երբայերենում ես ռ-ն նախում է գեպի ձախ։ Անուենը միանգամայն համապատասխանում է հայերենին (դալեթ—գա)։ Մեարոպն առաջնորդվել է միավանկություն սկզբունքով, ուստի դալեթ-ի վերջին երեք տառը հանել է և թողել միայն գա-ն։ Մա ալնքան պարզ ու ակնհայտ է, որ ոչ մի կասկածի առիթ չի տալիս։ Մինչդեռ հունական Δ տառի հետ ոչ մի հետափոք նմանություն չունի, իսկ անուենը՝ գելտա միայն մի տառով է նման հայերենին (դ-ով), որ հիմք չի տալիս նույնիսկ մտածելու, թե գա-ն գելտա-ից է։ Եունը երբայերեն զալեալից Մեարոպն ստեղծել է և հայոց Թ տառը՝ ձախ կողմից իջեցնելով մի ուղղահայաց գիծ. (թ). ալսպիսով, լրացրել է հայոց շրթնալին պալթական բաղաձայնների լրիվ շարքը՝ Գ, Թ, Տ (Մ)։

Այս իր ստեղծած 'Ի-ի ձախակողմյան մասնիկը կտրուցնելով և թեկելով գեպի ուղղահայաց գիծը, ստեղծեց 'ր տառը (երկաթագրերում Գ տառի առաջի կտր մասը չի միանում ուղղահայաց գծին)։ Հայոց 'ր տառը ոչինչ նմանություն չունի հունական գամմային՝ ոչ ձևով և ոչ անունով (Γ, Υ, Φ)։ Այս տառը Մեարոպն է ստեղծել հայոց 'ր տառից, իսկ անուենը վերցրել է երբայցոց գիմել բառից, դուրս գցելով վերջին ել-ը, նույն միավանկությունը պահելու սկզբունքով (գիմել-գիմ)։ Իր ստեղծած Թ տառից Մեարոպն ստեղծեց նաև հայոց ժ տառը, որ չկա երբայերենում, ոչ էլ հունարենում։ Մա Թ-ի աջ թեկն է, անունն էլ ժե, ինքը Մեարոպն է գրել միանգամայն ինքնուրույն կերպով։ Ժ-ի՝ Թ-ից սերվելու հանգամանքը առաջին անգամ նշել է պրոֆ. է. Աղաջանը (տես «Հայ լեզվաբանություն» պատմություն», Ա հատոր, էջ 68—69)։

Հայոց Մ տառը սերված է երբայական մեծ տառից թեև ձևով և թեև անունով (մեմ-մեմ)։ Միայն վերջին մ-ն փոխվել է ն-ի, սովորական տարբերակության (գիսիմիլայցիայի) օրենքով։ Կարող է պատահել նույնիսկ, որ այս փոփոխությունը տեղի է ունեցել հետագայում, Մեարոպից հետո (քանի որ մեզ հայտնի չէ, թե մեր տառերն ինչպես են հնչվել կամ ինչ անուն են ունեցել V դարում)։

Ր տառի սերումը երբայական բեյիշ-ից կասկած չի հարուցում։ Նույն տառն է բացարձակապես, միայն երեսը շուտ է աված գեպի աջ։ Այս տառը նման է նաև հունական Ր (րո-ին)։ Այդ իսկ պատճառով լեզվաբաններից ոմանք գրել են հունական Ր-ի գիմաց։ Հայագետ Հյուրշմանը հունաց Բ-ի գիմաց գրել է հայոց թե յ' և թե Թ տառերը, թեև դրանց միջև զգալի տարբերություն կա։ Գարբիել Ալվազյանը հունական Բ-ի գիմաց գրել է միայն հայոց Թ տառը, դուրս թողնելով ր-ն։ Մինչդեռ թե ձևով և թե մանավանդ հնչյունով մեր Ր-ն ավելի մոտ է հունաց րո-ին։ Գարագաշյանը գրում է, որ հայոց Թ-ն համապատասխանում է հունաց Բ-ին և շատ անգամ կրի Ջ-իւ-հոս (ալստեղից էլ՝ Հոսիանոս > ἵσσοστος)։ Նա հայերենն ու հունարենը բաղադասելիս հունաց Թ-ի գիմաց գրել է հայոց ր-ն (որ միանգամայն ճիշտ է), իսկ Թ-ն դուրս է թողել աղյուսակից⁷։ Աճառյանը, բայց է. Աղա-

⁶ Պրոֆ. է. Աղաջանը գտնում է, որ Թ-ն ստեղծվել է Թ-ի թեկը վերև բարձրացնելով։ Տե՛ս նրա «Հայ լեզվաբանություն» պատմություն», հատ. Ա, 1938, էջ 68։

⁷ Տե՛ս Ա. Մ. Գարագաշյան, Քննական պատմություն Հայոց, մասն Գ, Թիֆլիս, 1893, էջ 40։

լանի վկայություն, գտել է, որ, իբր, Ր-ն սերված է Տ ից, զբա համար էլ այբուրենի մեջ հաջորդում է Տ ին, ինչպես, ասենք, Ժ-ն, որ սերված է Խ-ից, հաջորդում է վերջինիս: Եթե սա համարենք սկզբունք և օրինաչափություն հանրեն տասերը գաստիրելիս, ապա սկամա պետք է ենթադրենք, որ մեր ձ-ն սերվել է Դ-ից, Տ-ն Խ-ից, Ծ-ն՝ Խ-ից և այլն: Որ մեր Ր-ն նմանություն ունի երկաթադիր Տ-ի աջ մասին, զա ակներև է: Սակայն այդ նույն Ր-ն նրման է նաև Մ-ի աջ մասին, Ր-ին, առանց ներքևի թեխիլի և այլն: Ր-ի նմանությունը երբայերեն սեյչ ին և հունաց Ս-ին ալնքան ցարտուն է, որ ոչ ոք չի կարող կասկածել այդ առթիվ: Գուցե սա հայոց միակ տառն է, որ նման է աշխարհի շատ լեզուների ը-երին: Բայց մեր լեզուն տարբերում էր նաև ավելի երկար ու թրթուուն ու, որ չունենին հունարենն ու երբայերենը՝ Դա մեր Խ-ն էր, որ Մեսրոպն ստեղծեց զարմանալի հետաքրքրական ձևով՝ նա տեսավ, որ մեր Խ հնչյունը զրեթե երկու անգամ ը-ի կրկնությունն է. և, իբր կապելով երկու ը, ստեղծեց Խ-ն ($\text{Ր} > \text{Խ}$): Այս հարցում ես մազաչափ չենք կասկածում: Մեսրոպի համար մեծ գովարտությունը հունարենում և երբայերենում չեղած տասերի ստեղծումն էր, իսկ մեր Ր-ն կար թե մեկ և թե մյուս լեզվում: Ուրեմն ինչու պետք է Մեսրոպը վերցնեք այն Տ տառից՝ ինչ վերաբերում է Աճառլանի մյուս ենթադրությունը, թե Վ-ն սերված է Ս-ից, պետք է ասել, որ այդ փաստը համոզիչ է: Երկաթադրերում Վ տառը այսօրվա ձևից բավական տարբերվում է, նման է Ս-ին, ներքևից մի երկար պոչով՝ Ա: Սակայն կարելի է ենթադրել, որ Լ-ից է սերվել լ-ի կցումով (կամ երկու լ-ով— երկար և կարճ): Այս վերջին ենթադրությունը կլինի վեպ-ի արդի ձևի համար, իսկ երկաթադրերի վեպ-ը սերված պետք է լինի, բոտ Աճառլանի, Հրեից սոմեխի (Օ) վերը բաց անելով ստեղծել է հայոց Ս տառը (Օ—Ս) վերջինս շուտ առավ ստացել է Ս տառը, անունը ինքն է գրել սե, որ ոչ հունաց սիգմա-ին է նման և ոչ էլ հրեից սոմեխ-ին, Մեսրոպն է մկրտել նրան: Հայոց և հունաց զրեբը բողոտակիս, բոլոր բանասերները դուրս են թողել մեր Յ տառը, միանգամայն հասկանալի պատճառով: Սա չունի իր համապատասխան հնչյովն ու զիրք հունարենում: Մինչդեռ երբայերենում նույն ձևով և նույն հնչմամբ (նույնիսկ նույն անունով) ասկա է ցողկ կամ ցողիկ տառը, որը և չնչին փոփոխությամբ տեղադրված է Մեսրոպլան այբուրենում: Անունը զարձակ է միավանկ՝ ցո—ցողի-ի փոխարեն: Սա միանգամայն պարզ ու ակներև փաստ է, այնինչ հունարենի հետ բողոտակի կրեք հնարավոր չէ պարզել մեր Յ-ի հարցը: Այս Յ-ից Մեսրոպը հորինել է Յ կիսաձայնը:

Հետաքրքրական է և երբայերեն չեյն-ի Շ օդտագործումը: Այս տառից Մեսրոպը ոչ միայն հայոց Ծ-ն է ստեղծել, այլև գանազան ձևափոխություններով՝ Ջ և Չ տառերը: Մեր Շ-ն խիստ նման է չեյն-ին: Միայն վերևի հորիզոնական գրությունը զրված ալիքավոր զիծը տառի մարմինն կապում է օդակաձև, իսկ հայոց Շ-ի վերևի մասը ուղղակի նստում է Շ-ի ուղղահայաց մասի վրա: Հրեից Շ-ն Մեսրոպը շուտ է ավել զլիսիվայր և ստեղծել մեր Չ տառը, իսկ վերջինի ներքևի ոլոր մասը փոխարինել է ձախից-աջ իջնող թևք գծով և ստացել Չ տառը: Վերջին երկու տառը բացակայում են թե երբայերեն և թե հունական ալֆաբետում, ուստի սրանց անունները ես Մեսրոպն ստեղծել է ինքնուրույն կերպով (ձա և չա): Սրանք

սպասարկուն՝ հալկական տառեր են, որ ոչ մի լեզվում չի կարելի հանդիպել: Արանց ծնել է Մեսրոպյան հանճարը:

Հայոց Գ-ն ևս, ոչ մի նմանություն չունի հունական κ -ին, (կապպալին) անաարակույս սերված է հրբալական կի-ից: Մեսրոպը շուտ է տվել ձախից-աջ և վերևի կորացած մասը ուղղահայաց կերպով բարձրացրել է վերև անվանել է կեն, որ նույնպես ինքնուրույն պետք է համարել: Հայոց բարդ բաղաձայններից հրկուսը՝ ձ և Ծ, չկան հունարենի և հրբալիցերենի մեջ: Արանց ծագման հարցը ևս հույժ հետաքրքրական է: Այդ հրկու տառը հրկաթագրերում բալական նման են միմյանց (ձ, Ծ): Առաջինի հրկար ծալրը ձգվում է դեպի աջ, իսկ հրկորդինը՝ ձախ: Մեզ թվում է, թե այս ձ տառի մեջ Մեսրոպը տեսել է Տ-ի և Ծ-ի տարրերը ($\text{Տ} + \text{Ծ} = \text{ձ}$), քանզի նրա ստեղծած ձ-ի մեջ պարզ հրկում են հրբալիցոց Տ-ն և Ծ-ն, որ կարծես կանգնած, են իրար դիմաց: Համենայն դեպս, մեր հրկաթագիր ձ-ի հրկար ծալրը հիշեցնում է որոշակիորեն հրկից Ծ տառը: ձ-ն ստեղծելուց հետո, նույն տառից, նույն սկզբունքով ($\text{տ} + \text{ս} = \text{ծ}$) ստեղծել է և Ծ-ն: Դանի որ վերահիշյալ լեզուներում այս տառերը չկան, Մեսրոպն անվանել է՝ ճ և ծա: Ըստ հրեույթին, հնում այս բարդ հնչյունների բաղադրիչ մասերն ավելի որոշակիորեն էին զգացվում, քան այսօր: Օրինակ, մեր Չ-ն, որ կազմված է Թ-ից և Ծ-ից, որոշակիորեն ի հայտ են գալիս թշուառ բառի մեջ, որ է՝ չու առ չու առական-հրկից չված, հեռացված—թշուառական—թշվառական: Կամ՝ մեր Փ-ն որ Պ-ի և Լ-ի միացությունն է, հրեան է գալիս սեպհական—սեփական (սեպուհ-ական) բառի մեջ:

Հայոց Ղ տառը անցյալում, ըստ հրեույթին, այլ կերպ է հնչվել, քան այսօր: Առաջի հունական λ լամպտա-ն միշտ փոխարինվել է դատ-ով, թեև մենք ունեցել ենք նաև լլուն-ը (լ), որ այսօր ավելի մոտ է օտար լեզուների Լ-ին: Այժմյան Ղ-ն ավելի մոտ է Ս-ին, քան Լ-ին, բայց հունարեն Լ ունեցող բառերը թարգմանվել և տարածվել են մեր լեզվում Ղ-ով, իսկ այսօր դիտվում են իրեն հալերեն բառեր (մեղոգիա, մեղեղի, ալս, աղ և այլն): Մեզ թվում է, որ Լ և Ղ հնչյուններն այնքան մոտ են եղել միմյանց, որ փոխարինել են մեկը մյուսին (թուղ—թուլլ—թուլլ): Հայոց Լ տառը բալական նման է հրկից լամետին, ավելի նման է, անշուշտ, լատիներեն Լ-ին:

Մեսրոպը, հրկարբառների համար առանձին տառ չի հնարել: Մեր լեզվում հրկու կիսաձայն հնչյունները, գործածելով ձայնավորների հետ, ստեղծում են հրկարբառներ, որոնք գրվում են հրկու տառով՝ ալ, ոլ, աւ, եւ-իւ, ու և այլն: Մեր Ի-ը, որ մի ժամանակ գործածվելիս է եղել իրեն իւ (հին ձևագրերի մեջ հանդիպում ենք հւիւս, կուպտոս, ալսինքն՝ ձայնավորի տեղ), շատ դեպքերում էլ գործածվել է Վ-ի տեղ (նւվազ, նւստ, վարսա-սիրալ և այլն, ալսինքն իրեն բաղաձայն): Սակայն մեծ մասամբ վլունը (ւ) մեզ հանդիպում է հրկարբառների մեջ՝ աւ, իւ և այլն: Սա համապատասխանում է հունարենի իպսիլոն (ε) կոչվող տառին և վերջից հրկորդն է մեր ալրուրենի մեջ, ինչպես իպսիլոնը հունարենում: Հալերենի հրկարբառներից է եղել նաև Ու-ն, որ այսօր ձայնավոր է: Ըստ հրեույթին, հալերը չեն հնչել մաքուր Ու, այլպես Մեսրոպը ու-ի համար ևս մեկ տառ կհնարեր և կտեղավորեր մեր ալրուրենի մեջ:

⁵ Տե՛ս Վ. Ս. Վրդպեթյանի, Թեոլոգիա, 1869, էջ 15:

Ո-ի և ւ-ի միացումով կազմված երկրարբառում, անշուշտ հետագայում է հնչյվել իրրև ու, ճիշտ այնպես, ինչպես Ա և ւ հնչյուններիով կազմված աւ երկրարբառը միջին դարերում դարձավ Օ (աւր— օր, աւձ— օձ և այլն): Ուրեմն՝ Մեսրոպի օրով հաշիբը չեն ունեցել ոչ Ու և ոչ Օ ձայնավորները:

Մեսրոպյան այբուբենը մեկ ու կես հազարամյակ ծառայել է հայոց գրությունների և միշտ էլ անթերի կիրպով արտահայտել է մեր լեզվի հնչյունական հարստությունը: Եստ լեզուների այբուբենը համեմատաբար կարճ ժամանակամիջոցում տասնյակ փոփոխություններ է կրել, այնինչ մեսրոպյան այբուբենը ցայսօր կատարյալ է: Այս այբուբենն սանդղելիս Մեսրոպն օգտագործել է 'Դանիելյան' իր ձեռքի տակ գտնվող նշանագրերը, որ, ինչպես տեսանք, երբայական գրերն էին, օգտագործել է նաև հունական այբուբենը: Հատկապես փերջինիս գրության կարգն է փերցրել (ձախից-աջ) և ձայնավորների կանոնավերությունը: Տառաձևերը, ինչպես տեսանք, մեծ մասամբ հրեական են, սակայն Մեսրոպը կարողացել է Դանիելյան գիրը հայացնել և երանից ձևեցնել նոր, գուտ հայկական գրելի, որ ոչ մի լեզվում չկան: Նա դարձել է հայոց գրերի իսկական և միակ սանդղողը:

Կ	Խ	ալիճ	Ր	ՀոՄԵԴ
Ձ	ԲԵՅ		Ր Ն	ՄԵՄ
Ը	ԳԻՄԵԼ		Լ Ե	ՇուՇ
Ծ	Դ-ալԵԹ		Օ	ա ո Մ Ե Խ
Ծ	ԷՅ		Վ	այիԵՆ
Ի	ՎուՖ		Փ Օ	ՖԵՅ
Կ	ԿայՆ		Վ Ց	Կոչիկ, Կոչե
Ո	ԽԵՍ		Դ	Հի-
Ս	աԵԿ		Շ	ԲԵՂ
Ի	Իյր		Ք	ՉԵՅ
Ք	ՀոՖ		Մ	Եր ոյ Ֆ